

Հայկական գիտահետազոտական հանգույց  
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

N1334

Հ. Ս. Խ. Հ. ԼՈՒՅԺՈՂԿՈՄԱՏՈՑ

ՍՊԸ. ԴԱՍՏԻՐԱԿՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

Լ. Ս. ԳԵԶԵԼԻՆԱ

ԱՐՋՈՂ ՄՆՈՒՄ ՅԵՐԵՒԱՅԻՆ

ՎԻՃԱԿՈՒԹԵԿԱ  
ԻНСՏԻՏՈՒ  
ՊՈՏՈԿՈՎԱՆԻ  
Ակադեմիա Խառ  
СССР

ԹԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ  
ԵՐԵՎԱՆ - 1928

1928 N 689

ETOS 20 JUL 2010

С и  
С 28342

ՀՈԽՀ ԼՈՒՍԴՈՂԿՈՄԱՏ ՍՈՑ. ԴԱՍՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ  
ԳԼԻԱՎՈՐ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

613.22

9-44 L. Ս. ԳԵՂԵԼԻՆԱ

# ԱՊՈՂ ՄԱԼԻԿ ՅԵՐԵՒԱՅԻՆ

БИБЛИОТЕКА  
ИНСТИТУТА  
ДОСТОВЕРНОСТИ  
Академии Наук  
СССР



ՀՀ-ՀՅԱՅ

ԹԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ - 1928

001 80 MAR 2013

ՄԱԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՆՐԱՄԱՏԶԵԼԻ ԳՐԱԴԱՐԱՆ  
ԳՐՔՈՒՅՑ № 7



59393-66

Գրասունիքար 713 բ.

հ. 743

Տիրաժ 3000

Գետհրատի 2-րդ տպարան Յերևանում — .609

ԸՆՏԱՆԻ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ՅԵՎ ԹՌՉՈՒՆՆԵՐԻ  
ՎՈՐԱԿԸ ԿԱԽՈՒՄ ՈՒՆԻ ԿԵՐԻՑ

Յուրաքանչյուր անտեսուհի գիտե, վոր տարբեր թոշունը և տարբեր կենդանին զանազան կեր և պահանջում. այդ կենդանիների մսի համն ու վորակը կախում ունի նրանից, թե ինչով են կերակրում նրանց: Յուրաքանչյուր հողագործ կամ բանջարագործ գիտե, վոր զանազան հողի մեջ միենույն բույսերը տարբեր են աճում: Այն, ինչ չի աճում թուզը հողում, լավ ե աճում պարաբռ հողի մեջ: Զանազան տեսակի պարաբռացում, վոր բույսերին սնունդ ե տալիս, հացի և բանջարեղենի տարբեր բերք ե տալիս:

Մարդը սնունդ ե ստանում բույսերից և մսից: Զանազան տեսակ կերակուրներ պատրաստելու համար վերցնում են զանազան տեսակի միս: տավարի թոքերն ու լյարդը սուսի համար անպետք են, յերիկանները լավ են: աղը դրած վարունգով արգանակի համար: Թոշունների միւսը թե իր տեսքով և թե համով տարբերվում ե

ուրիշ կենդանու մսից. սազից մսաջուր չի կարելի պատրաստել, իսկ անտառի, վայրենի թըռչունը պահանջում է պատրաստելու մի այլ ձև:

## ՄԱՐԴՈՒ ՍՆՆԴԻ ԲԱՂԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Այսն տեսակ միս բաղկացած ե սպիտակուցից, (վորն իր կազմությունով նուան ե հավի ձվի սպիտակուցին), ճարպերից և ոսլաներից (կրախմալ), կամ նշաստակներից, բայց մսի այդ բաղադրիչ մասերը, վերցրած զանազան կենդանիներից և թռչուններից, տարբեր են և նրանք մարդու աղիքների մեջ տարբեր ձեռվ են մարսվում. վորանք դժվարությամբ, իսկ վորանք՝ դյուրին կերպով: Նայած թե ինչ ե կերել կովը, ըստ այնմ փոխվում ե նրա կաթի համը, հոտը և գույնը. այդ կաթի մեջ դուք կզգաք թե կանաչ արոտատեղի հոտավետ խոտերի բուրմունքը և թե «յավշանի» դառնությունը: Բուլսերը նույնպես բաղկացած են ճարպերից, սպիտներից և ոսլայից, բայց նրանց կազմությունը կենդանու մսից պատրաստած կերակրից տարբեր է: Իրենց բաղադրությամբ տարբեր բոլոր այս սպիտները, ճարպերը և նշաստակները, վորոնք դըտնվում են կերակրի մեջ, ներս են գնում մարդու աղիքները և նրանց մեջ մարսողական մի շարք հյութերի ոգնութամբ վերամշակվում են և

դառնում ուրիշ տեսակ, դառնում են փոխված սպիտներ, ճարպեր և ոսլաներ մարդու մարմնին համապատասխան. աղիքների միջից նրանք անցնում են արյանը, վորը մի առանձին խողովակներով (արյունատար անոթներ) տարածվում և ամբողջ մարմնով: Այսպես ուրեմն արյունը հանդիսանում է սննդարար նյութերի պահեստը:

## ԱՐՅՈՒՆԸ ՍՆՆԴԱՏՈՒ ՆՅՈՒԹԵՐԻ ՊԱՀԵՍՏՆ Ե

Մարդու մարմինը բաղկացած ե զանազան հյուսվածքներից. նրա հիմքը վոսկրային կմախքն ե, վորը պատած ե մկաններով (մսով), իսկ մսի վրայից - ճարպի շերտն ե և մաշկը:

Դանդի մեջ - գանգում ե ուղեղը. կրծքի վանդակի մեջ - թոքերն ու միրաը. վորովայնի մեջ - լարդը, ստամոքսը, աղիքները, յերիկամները, փայծաղը, սեռական գործարանները և այլն: Մարդու բոլոր գործարանները բաղկացած են տարբեր հյուսվածքներից և տարբեր կերպով են կառուցված: Մարդու այս ամբողջ բարդ մեքենան մեծ աշխատանք է կատարում և այս աշխատանքի մեջ մեքենայի առանձին մասերը մաշվում են ու կարիք ունեն նորոգության, այս նորոգության նյութերը տալիս ե սնունդը:

Լարդի և մկանների մեջ կիտվում ե ոսլամի պաշարը, իսկ մաշկի տակ կիտվում ե ճարպի

պաշարը։ Այս գործարանները պահեստատեղեր  
են, իսկ ամեն որքա վատնման համար սնունդը  
արյան պահեստից ե ստացվում։ Հենց վոր ար-  
յան միջից անհետանում են մարդու մարմի վը-  
րա ծախսված այս կամ այն նյութերը, իսկույն  
պահեստատեղերից արյան մեջ են անցնում սը-  
նընդարձ նյութերի նոր քանակները։

### ՄԱԳՈՒՐ ՈԴՅ ՆՈՒՅՆՊԵՍ ԿԱՐԵՎՈՐ ՍՆՈՒՆԴ Ե ՎՈՐՊԵՍ ՅԵՎ ԿԵՐԱԿՈՒՐԸ

Արյան մեջ կա և թթվածին, վորը ստաց-  
վում ե թոքերի միջոցով։ Յեթե թթվածնի պա-  
շարը թիչ ե և մարդ յերկար ժամանակ ապրում  
ե բնակարանային վատ պայմաններում, այդ  
մարդը, չնայած լով սննդին և իր զիրությանը,  
առողջ համարվել չի կարող, վորովհետև սննդի  
համար թթվածինը նույնքան կարևոր ե, վորքան  
և կերակուրը։ Առանց թթվածնի մարդ կստա-  
նա արյան պակասություն։

Թթվածինն ամենամատչելի սնունդն ե, վո-  
րովհետև նա գտնվում ե մաքուր ողի մեջ, ևս  
առավել նա շատ ե այստեղ, վորտեղ կանաչ  
բուսականությունն առատ ե։

### ԿԵՐԱԿՈՒՐԸ ԵՆԵՐԳԻԱՅԻ ԱՂԲՅՈՒՐՆ Ե

7 Սոված մարդը վատ բանվոր եւ Մարդ աշ-  
խատանքի համար ուժ (եներգիա) միայն կե-

րակրից ե ստանում։ Վորքան ծանը ե աշխա-  
տանքը, վորքան շատ ուժ ե գործադրում մար-  
դը նրա վրա, այնքան սննդի շատ պաշար ե  
գործ գնում մարդը։ Իսկ վորքան շատ վատնինա  
իր մարմնից, այնքան շուտ պետք ե լրացնի իր  
պաշարը, այսինքն՝ այնքան շատ պետք ե ուտի  
մարդ։

8 Ժամ աշխատող փայտահատը կամ գազ-  
գյահի մոտ աշխատող ճախարակագործը զանա-  
զան չափի եներգիա յեն վատնում, ապա ու-  
րեմն և նրանց կերակրի պահանջն ել տարբեր ե։

Մանավանդ նկատելի յե գրասենյակում աշ-  
խատողի և փայտահատի մկանունքների կատա-  
րած աշխատանքի տարբերությունը, ևս առավել  
յերբ վերջինն աշխատում ե անտառում, ապա և  
նրանց ուտելու պահանջն ու ախորժակն ել տար-  
բեր կլինի։

Բացի մկանների կատարած աշխատանքից,  
մարդու մարմի մեջ կատարվում ե և բոլոր  
ներքին գործարանների կողմից անընդհատ և  
բարդ աշխատանք։ Աղիքները վերամշակում են  
կերակուրը, վորն անցնում ե հետո արյան մեջ,  
լյարդն ու յերիկամները մաքրում են այդ ար-  
յունը. վոչ մի ըոպէ չի դադարում սրտի խփոցը,  
վորը մզում ե արյունը և տարածում ամբողջ  
մարմի մեջ, իսկ արյան մեջ պարունակվում ե

գործարանների և հյուսվածքների բնունզը: Շընչառությունը նույնպես վոչ մի բողե չի դադարում: Ներշնչած ողի հետ ընդունվում է թթվածինը և այդ թթվածինը թոքերի մեջ նույնպես անցնում և արյանը:

Ուրիշ գործարանները ևս շատ կարևոր աշխատանք են կատարում. բավական ե, վոր դադարի այս աշխատանքը թեկուղ ամենակարճ ժամանակով և մարդը կարող ե ծանը կերպով հիվանդանալ և նույնինկ մեռնել:

## ՅԵՐԵԽԱՅԻ ՅԵՎ ՀԱՍԱԿԱՎՈՐ ՄԱՐԴՈՒ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ

Հասակավոր մարդու մարմի մեջ կատարվող բարդ աշխատանքի նման աշխատանք և կատարվում նաև նախադպրոցական յերեխայի մարմնի մեջ: Միայն մի մեծ տարբերություն կադա յերեխայի աճումն ե: Յերեխան աճում ե, նրա հասակը բարձրանում ե (բոլ և քշում), նրաքաշն ավելանում ե, նա աճում ե նաև լայնության գծով: Վորտեղից ե վերցնում յերեխան այդ շնարարական նյութն իր գործարանների և բոլոր հյուսվածքների մեծանալու համար: Վորտեղից ե վերցնում յերեխան այն ուժը, վորը հարկավոր ե նրան իր մարմի մասերի կառուցման համար: Պատասխանը շատ պարզ ե: Շի-

նարարական ամբողջ նյութը և իր աճման ամբողջ եներգիան յերեխան վերցնում և միայն ու միայն կերակրից:

## ՎԱՏ ՄՆՈՒՆԴԸ ԴԱՆԴԱՂԵՑՆՈՒՄ Ե ԱՇՈՒՄԸ

Ամենքը տեսած կլինեն այն հիվանդոտ յերեխաններին, վրոնք շուտ շուտ տկարանում են և վորոնց ստամոքսն ու աղիքները վատ են մարսում կերակուրը: Այդ տեսակ 11—12 ամսական յերեխաններն իրենց քաշով և հասակով 3—4 ամսականներից մեծ չեն և միայն նրանց տանջալից խորշոններով պատած դեմքը ցուց ե տալիս նրանց իսկական տարիքը: Սովոր տարիններին յերեխանների աճումն ու քաշը կանգ ե առնում. սովոր տարվա յերեխանները 2-3 տարով յետ են ընկնում:

Յերեխայի աճման նյութը կերակուրն ե տալիս. կերակուրից ե յերեխան լրացնում իր աճող մարմի վատնումները, կերակրի շնորհիվ ե, վոր յերեխայի մարմնի ջերմությունը միշտ միատեսակ ե և հենց այդ կերակուրն ե նրան ուժ տալիս (եներգիա) աշխատելու համար:

## ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆԻ ԽԱՂԸ ՇԱՏ ՄԵՇ ՅԵՎ ԿԱՐԵՎՈՐ ԱՇԽԱՏԱՆՔ Ե

Դուք զարժացած հարց կտաք. ի՞նչ աշխատանքի համար ե յերեխային հարկավոր ուժը. միթե նախադպրոցականն աշխատում ե. չե՞ վոր նա միայն խաղում ե ու վազվում:

Ապա, ուշադրություն դարձրեք, թե վորքան ժամանակ ե յերեխան հանգիստ մնում, թերևս միայն քնի ժամանակ: Իսկ մնացած բոլոր ժանակ նա անընդհատ շարժման մեջ ե: Ապա փորձեք հաշվել քանի վերստ նա կվազի մի որվա մեջ, առանց դուրս գալու իրենց բակից, քանի հարյուր թոփչքներ նա կանի. վորքան առարկա—մեծ ու փոքր—նա կբարձրացնի, կը տեղափոխի ու քարշ կոտ հենց բնակարանի մեջ, և այն ժամանակ դուք կհամոզվեք, վոր յերեխայի ձեռքերի և վոտքերի մկանները, նրա սիրտը և բոլոր գործարանները շատ մեծ բեռ են կրում:

## ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆԻ ԿԵՐԱԿՈՒՐԸ ՊԵՏՖ Ե ԼԻՆԻ ԲԱՀԱՄԱՐ ԼԻՆԻ ՔԱՆԱԿՈՎ

Այս աշխատանքը նրա մարմի համար շատ մեծ ե և առանձին հոգ պետք ե տանել, վոր նրա կերակուրն իր քանակով միանդամայն բա-

վարար լինի. յերբ յերեխան աճում է, մեծանում են նրա մարմնի զանազան մասերը և ավարտվում են նրա մարմնի գործարանները, վորոնց ծավալը նույնպես մեծանում է:

Յերեխայի մարմնի զանազան մասերը կառուցված են սարքեր բաղադրության նյութերից: Կառուցման նյութը կերպարից ե վերցնում նա. յերեխայի արյան մեջ նրա մարմնի կառուցման համար բոլոր անհրաժեշտ նյութերը չկան, այն ժամանակ, վորտեղ այդ նյութերի պակաս լինի, մարմնի այդ մասը հիվանդ կլինի:

## ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆԻ ԿԵՐԱԿՈՒՐԸ ԲԱՀԱՄԱՐԸ ՊԵՏՖ Ե ԼԻՆԻ

Խառն կերպակուրը նրա համար ե, վոր յերբ վոսկրների աճման համար պակասում ե կիր կամ այլ աղեր, այն ժամանակ վոսկրների աճումն անկանոն ե լնթանում: Յերեխան կարճահասակ կմնա, նրա վոտները կծռվեն, կրծքի վանդակը անկանոն ձև կընդունի և այդ պատճառով թոքերը հսարավորություն չեն ունենալ լավ ծավալվելու: Յեթե կերպարի մեջ բացակա յեն այնպիսի նյութեր, վորոնք հարկավոր են աճող ուղղին, այն ժամանակ յերեխան ներփակին և դլուրագրգիռ կդառնա. նա ուսման մեջ առաջադիմություն չի ունենա, մինչեւ անգամ բթա-

միտ կլինի: Յեթե կերակրի մեջ չլինեն մ սրմնի  
ներքին գործարանների կառուցման համար  
պետքական նյութերը, այն ժամանակ ներքին  
գործարանները վատ կաշխատեն և այն ել վոչ  
միայն յերեխայության հաստկում, այլ և յերբ նա  
արդեն մեծ կլինի: Ահա թե ինչն ե պատճառը,  
վոր սովի տարիների յերեխանները, կարծես թե  
քաղցած չելին և լավ ելին կերակրվում, բայց  
չունեցին այն բոլոր նյութերը, վորոնք հարկավոր  
ելին նրա աճման և զարգացման համար:

Հասակավոր մարդու համար կերակրի մի  
փորձե նյութի պակասը, թեկուզ յերկար ժամա-  
նակով, այնքան մնասակար չե վորքան յերե-  
խայի համար: Մենք մինչե այժմ ել դեռ խիստ  
զգում ենք քաղցի անցած տարիների հետեանք-  
ները: Ինչըան յերեխաններ կան անդարդացած,  
ուժասպառ, արնապակաս, ծուռ վոտներով,  
թույլ կրծքով, տուբերկուլյոզի տրամադիր և  
զանազան տարափոխիկ հիվանդությունների հեշ-  
տությամբ յենթակա:

Ինչպես անենք, վոր կարողանանք բուժել  
ծանր տարիների մեզ հասցրած բոլոր վերքերը,  
վոր յերեխային կերակուր տանք նրա բոլոր պա-  
հանջների համեմատ և այնքան, վոր նրա մարմ-  
նի բոլոր մասերը. այսինքն՝ նա ամբողջապես  
առողջ և ամուր աճի:

Դրա համար շատ փող հարկավոր չե, այլ  
միայն պետք ե բարի ցանկություն ունենալ և  
բավականին ուշադիր լինել դեպի յերեխայի  
պահանջները: Պետք ե կերակրել յերեխային այն  
պես, վոր նրա կերակուրը բազմազան լինի —  
միս և ձկներ, ամեն տեսակ բնձնջարեղենն, բրինձ  
ձավար, ալյուր: Խառ կերակուր տալիս մայրը  
պետք ե հավատացած լինի, վոր յերեխայի ար-  
յան մեջ կա բավականին նյութ, այնպես, ինչ-  
պես պաշարատես տնտեսուհին հետզհետե զա-  
նազան մթերքներ ե կիտում ոթերանոցում: Այս  
պաշարած մթերքներից նա միշտ կարող ե զա-  
նազան կերակուր պատրաստել:

Թող վոչ մի մայր ինքն իրեն չխաբի, վոր  
նրա յերեխան կուշտ ե, յերբ կուշտ կերակրել ե  
նրան սուպով, գետնախնձորով և քաշովով. յեթե  
մայրը հաճախակի չփոփոխ ճաշի տեսակները,  
յեթե զանազան տեսակի ընթրիք չտա յերեխա-  
յին, նրա յերեխան ճիշտ ե լիքը կլինի, բայց  
առողջ չի լինի, վորովհետեւ նրա արյան մեջ  
չեն լինի շատ սննդանյութեր, ուրեմն այս կամ  
այն տեղում այդ պակասի ազդեցությունը յերբ  
և իցե կերեա:

Ինչ բաղադրություն պետք ե ունենա նա-  
խադպրոցականի սննդաբաժինը.

**Յոռող յերեխայի ոռական ստանալիք բաժինն  
ըստ տարիքի**

Մթերք	3-5 տարեկան	5-8 տարեկան
Հաց	150 գրամ ( $\frac{3}{8}$ գրվ.)	200 գր. ( $\frac{1}{2}$ գրվ սև ու սպիտակ)
Կաթ	400 գրամ (2 բաժակ)	300 գր. ( $\frac{1}{2}$ բաժ)
Միս	50,0 ( $\frac{1}{8}$ գրվ.)	100 գր. ( $\frac{1}{4}$ գրվ.)
Կովի կարաղ	20 գրամ (5 մոխալ)	24 գրամ (6 մոխ.)
Չոռ	1 հատ	1 հատ
Գետնախնձոր	100 գրամ. ( $\frac{1}{4}$ գրվ.)	150 գր. ( $\frac{3}{8}$ գրվ.)
Բրինձ, ձաղար	40 գրամ 10 (մոխալ)	40 գր. (10 մոխ.)
Թարմ բանջարեղեն	100 գրամ ( $\frac{1}{4}$ գրվ.)	100 գր. ( $\frac{1}{4}$ գրվ.)
Շաքար	25 գրամ (6 մոխալ)	25 գր. (6 մոխ.)
Թարմ մրգեր	1 խնձոր, տանձ, նա- րինջ կամ (400 գր.) 2 խնձոր տանձ, նա- րինջ կամ (400 գր.) 3 խաղող	2 խնձոր տանձ, նա- րինջ կամ (400 գր.) 3 խաղող

**ԲԱՆՁԱՐԵՂԵՆԻ ՄԵԶ ԿԱՆ ՍՆՆԴԻ ՀԱՎԵԼՅԱԼ  
ԱԶԴԱԿՆԵՐ («ՎԻՏԱՄԻՆ») ՎՈՐՈՆՔ ԱՐԱՆՁ-  
ՆԱՊԵՍ ՈԳՏԱԿԱՐ ԵՆ ՅԵՐԵԽԱՅԻ ՀԱՄԱՐ**

Ի՞նչ սննդատու նյութեր առավել ոգտակար  
են յերեխաների համար: Բժիշկները վայուց են  
նկատել, վոր յերբ մարդիկ յերկար ժամանակով  
կանաչեն չեն գործածում տկարանում են լըն-  
դախով (ցանցա):

Ինդախտը տարածված է բանտերում, զին-  
վորների մեջ, յերբ թարմ կանաչեղեն չեն գործ  
ածում: Փորձեր արին կենդանիներին տկարաց-  
նել լնդախտով—կանաչ չեյին տալիս. և այդ  
փորձերը միշտ ել հաջողություն ելին ունենում:  
ինչպես մարդու, նույնպես և կենդանիների լըն-  
դերից սկսում ելին արյուն հոսել, վոտոների վրա  
արյան բծեր ելին յերևում, ուռչում ելին հո-  
գերը. ըավական եր կերակրել հիվանդին կանա-  
չեղենով, վոր հիվանդն առողջանար, մանավանդ  
յերբ կանաչեղենը հում ելին տալիս: Բավական  
ե հիվանդին տալ որական մի թերի գղալ լիմոնի  
հյութ, գազար, խնձոր, տանձ և այլն, վոր հի-  
վանդությունը շուտով անցներ:

Յերեխային պետք ե ըստ կարելու ին հաճախ  
կանաչեղեն տալ. Ի՞նչ տալ—նարինջ, լիմոնի  
հյութ, միրզ, պատուղներ, գաղար, կաղամբի կոթ,  
բողկ և այլն... Իհարկե այս բոլորը կախում ունի  
մոր ունկորությունից և տարվա յեղանակից:  
Գիտակցելով մրգերի մեծ ոգտակարությունը,  
միշտ պետք ուրախությամբ յերեխաների հա-  
մար խնձոր կամ մի ուրիշ միրզ գնի, քան թե  
քաղցրավենի, կանֆետ կամ արևածաղկի հատիկ-  
ներ: Միայն պետք ե լավ լվանալ—մի քանի  
անգամ—կանաչեղենը, մրգերը՝ յեռացրած ջրում,  
վարակից խուսափելու համար:

Յերեխայի մննդի մեջ բանջարեղենը պետք է մեծ տեղ գրավի. նրա մեջ շատ կան զանազան սպիտներ, ոսլա, յերկաթ, վորոնք շատ անհրաժեշտ են յերեխայի համար: Բայց, բացի դրանից, մրգեղենի և բանջարեղենի մեջ ուրիշ նյութերի հետ միասին կան և այլ տեսակ նյութեր, վորոնք կազմում են մննդի հավելյալ ազդակներ կամ վիտամիններ: Բայց պետք է բանջարեղենը պատրաստել գիտենալ. վորովհետև լավ չպատրաստելուց անհետանում են վերոհիշյալ վիտամինները, վորոնք պաշտպանում են լնդախտից: Պատրաստելու յեղանակը մի բարդ բան չի: Շատ հաճախ գաղար կամ բողկ կամ այլ բանջարեղեն պատրաստելիս պղնձի մեջ շատ ջուր են լցնում, յեփում են բանջարը, ջուրը դեռ ածում, իսկ բանջարից հետո մի ուրիշ ուտելիք են պատրաստում, խառնելով կարագի կամ մի ուրիշ մթերքի հետ. այս յեղանակով պատրաստելիս շատ վիտամիններ կորչում են, վորովհետև յեփելիս նրանք անցնում են բանջարից դեռ ածած ջրին: Յեթե ջուրը շատ ե արդ որը, պետք է ոգտվել այդ ջրից և սուզ պատրաստել. կեպով յեփած գետնախնձորը (կարտոֆիլը) վիտամինը պահպանում է իր մեջ:

59393 · 66

## ԻՆՉՊԵՍ ՊԱՏՐԱՍՏԵԼ ԲԱՆՋԱՐՆԵՐԸ

Ավելի լավ են նրանից պլուրե պատրաստել և այսպես. մի յերեխայի համար պետք է վերցնել 3 հատ գետնախնձոր, կաղամբի 2 տերև և միջին մեծության 2 գազար. պետք է մաքրել մանր կտրտել և դնել պղնձի մեջ ու լցնել յերկու ու կես բաժակի չափ ջուր. 15 րոպեի չափ խփել դրանց, ու հետո գդալով լավ տրորել ու դնել տաք տեղ, բայց վոչ կրակի վրա. հետո թելի մեկ գդալ ալյուրը տապակել թելի մի գդալ լուզով, լցնել տրորած բանջարեղենի վրա, լավ խառնել ու մի փոքր ել աղ ցանել վրան. և պլուրեն պատրաստ ե. և այդպես թարմ պատրաստած տալ յերեխային ուտելու:

## ԻՆՉՊԵՍ ՊԵՏՖ Ե ՊԱՏՐԱՍՏԵԼ ՄՐԳԻ ԱՅԱՆՔՈՎ ԲԱՇՈՎԻ

Յերեխաների համար շատ ոգտակար է քաշովին մրգի կամ պտուղների պլուրեի հետ պատրաստած: Առաջ պատրաստում են բընձի կամ մաննի քաշովի, իսկ ջոկ պլուրե յեն պատրաստում մրգից կամ մի այլ պտղից, ինչպես բանջարի պլուրե. կաթնովը խառնում են պլուրեի հետ, շաքար են ձգում մեջը և թարմ պատրաստած յերեխային են տալիս:



Ամառ ժամանակ պետք ե առանձնապես հոգ տանել, վոր յերեխաների կերակրի մեջ շատ կանաչեղեն լինի, վորովնեաւ թարմ կանաչեղենը շատ ե պարունակում վիտամիններ։ Պետք ե ամեն տեսակ բանջար տալ՝ գաղար, տակ, թարմ կաղամբ, բազուկ, կարմիր կաղամբ, գետնախնձոր։

Իսկ պտուղների ոգտի մասին խոսեցն անգամ ավելորդ ե՝ նրանց մեջ շատ կան ոգտակար վիտամիններ, յերկաթ, ոսլա և այլն....

## ՎՈՐ ՄԹԵՐՁՆ Ե ՇԱՏ ՆՊԱՍՏՈՒՄ ՅԵՐԵ- ԽԱՅԻ ԱՃՄԱՆԸ

Շատ չի անցել այն որից, յերբ պարզեցին, վոր յերեխայի աճմանը նպաստում են մի շարք սննդարար նյութեր։ Նկատել են, վոր յեթե յերեխային իբրև կերակուր չտան թարմ, անարատ կաթ և դրա փոխարեն յեթե յերեխային տան քաշած կաթ կամ պահածո կաթ, այն ժամանակ յերեխաների առողջության վրա այդ վատ կանդրագառնա։ Արտասահմանում մի քաղաքում 40 յերեխայի աչքերը ծանը կերպով հիվանդացան և յերբ սկսեցին վորոնել պատճառները, հայտնի դարձավ, վոր հիվանդացել են այն յերեխաների աչքերը, վորոնց՝ յերեսը քաշած կաթ են տվել։ Աչքացավ ունեցող յերեխաները շատ վատ ելին

աճում, դա հերիք չե. յերբ այդ յերեխաներին սկսեցին տալ որական մի թելի գդալ ձկան լուղ, այն ժամանակ յերեխաները աճում ելին կանոնավոր և աչքերը չելին ցավում։ Բանից գուրութեկավ, վոր յերեխայի աճման վրա լավ ազգեցություն են թողնում մի շարք ալլ մթերքներ՝ յերիկաֆներ, լարդ, մերձ յերիկամային ճարպը, կարագը, ձվի գեղնուցը, կանաչեղենից յեղիպտացորենը, թարմ կարմիր պորինջանը, սպանաղը, թե յերեխայի և թե հասակավորի համար ոգտակար են հետեւյալ մթերքները՝ ուղեղ, ձկնկիթ, սիսեռ, վոսպ, լոբի, սպանաղ, վարսակ, մեղր, ընկույզ, կան մթերքներ, վորոնց մեջ կան մի քանի տեսակ վիտամիններ, անպես վոր ակնհայտ ե, վոր յերեխային առողջ և ամուր մեծացնելու համար առանձնապես թանգարժեք մթերքներ և դեղեր ճարելու կարիք չկա։ Մայրը միայն պետք ե աշխատի վոր յերեխայի մնագի մեջ լինեն զանազան տեսակի բանջարեղեններ, զանազան տեսակի միս, հատիկներ, բրինձ, կարագ, մրգեր, մեղր, շաքար։

Ոգտակար ե նաև թարմ շոկոլադը և քիչ քանակով կանֆետներ։

Յուրաքանչյուր սալը պետք ե իմանա, վոր կարելի յե կուշտ ուտացնել յերեխային, բայց յերբ յերակուրը միատեսակ ե, վոր շաբաթվամեջ միենույն ճաշը կը կնվում ե մի քանի ան-

կամ, այն ժամանակ յերեխայի սճնդի նյութերը  
պակաս կլինեն, նյութեր, վորոնք անհրաժեշտ  
են նրա զարգացող մարմնի աճման և աշխա-  
տանքի համար:

## ՆԱԽԱԴՐՈՅԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՎՈՐ ԿԵՐԱԿՈՒՐՆ Ե ՎԱՏ ՅԵՎ ՎՆԱՍԱԿԱՐ

Յերեխայի աղիքները տակավին ուժեղ չեն,  
վոր կարողանա մարսել ամեն տեսակ կերա-  
կուր. խոզի ճարպոտ միսը խանգարում և  
նրա մարսողությանը. կծու բաներ ևս չպետք  
ե թուզ տալ, որինակ՝ բողկ, պղպեղ, մանանեխ.  
քացախի փոխարեն յերեխայի կերակրին պետք  
ե խառնել թարմ լիմոնի հյութ, կարմիր բողկ  
քիչ քանակով կարելի յե տալ, նույնպես կանաչ  
սոխ. պահածոներ (բացի մրգերից) յերշիկ (կալ-  
բաս) միայն թարմ պատրաստածը, իսկ թարմ  
պատրաստած յերշիկ ճարելլ շատ դժվար ե.  
յերշիկից հասակավորներն անգամ թունավորվում  
են, ուր մնաց յերեխայի թուզ ստամոքսը, յեթե  
ծնողները հավատացած են, վոր յերշիկը բոլորովին  
թարմ ե, այն ժամանակ կարելի յե տալ Դդմի կո-  
րիզը և արեածաղկի հատիկները քիչ քանակով  
չեն կարող վնասել յերեխային. այլ բան ե զնածը.  
այս դեպքում յերկու տեսակ վնաս կա. ծախու  
հատիկները միշտ ել կեղտոտված են լինում ողից

կամ ծախողի ձեռքերից. իսկ փոշու և կեղտի մեջ  
միշտ ել վարակ կա, վորը յերեխան տանում ե  
բերանը. մյուս կողմից արեածաղկի հատիկ-  
ները լցնելով յերեխայի ստամոքսը զրկում են  
նրան ախորժակից, բացի զրանից չբթելն ել  
վնասում և ատամներին:

## ՊԱՀՊԱՆԵՑԵՔ ՆԱԽԱԴՐՈՅԱԿԱՆԻ ԱՏԱՄՆԵՐԸ

Ամենքին հայտնի յե, վոր նախադպրոցա-  
կանն ունի բավկանին մեծ՝ թվով 20 կաթնա-  
տամներ, վորոնք 7-րդ տարուց ամուր և մշտա-  
կան ատամներով են փոխվում. Նախադպրոցա-  
կանների ատամների հետազոտությունը շատ  
տխուր պատկեր տվեց մեզ. Հարյուր յերեխա-  
յից հազիվ 20 կային, վորոնք առողջ կաթնա-  
տամներ ունեին, իսկ վեց տարեկաններից ա-  
տամների փոխելուց առաջ 100-ից միայն վեցի  
ատամները չեն ցավում. Ընդհանրապես  
յերեխանների բոլոր ատամների  $\frac{1}{3}$  ը, իսկ մի  
մասի և կեսից ավելին փչացած են. Այս հար-  
ցում շատ հանցավոր են ծնողները, հիվանդ ա-  
տամները լավ չեն աշխատի, նրանք չեն կարող  
լավ ծամած կերակուրը դժվար և մարսում յե-  
րեխան ևնա հաճախ համառ կերպով հրաժարվում  
ե շատ ոգտակար կերակուրներից:

Յերեխայի փշացած ատամները լավ միջոց  
են հանդիսանում վարակման համար. յերեխան  
տանջվում ե ատամնացավից, դառնում է ներ-  
վային, դրութագրգիռ և լալկան:

Յերեխաների համար վնասակար են նաև  
իսկական սուրճը և ամուր թեցը. խմելու համար  
կարելի յե տալ բաց թեյ և գարու սուրճ. ար-  
հետական կերպով պատրաստած հանքային  
ջրերի մեջ ներկեր և սախարին կա, ուստի չպետք  
ե տալ յերեխաներին:

### ԱԼԿՈՉՈՒԸ ՎՆԱՍԱԿԱՐ ԹՈՒՅՆ Ե

Յերեխայի համար առանձնապես վնասակար ե  
ալկոհոլը, մինչև անգամ աննշան քանակով. հայ-  
րերը հաճախ փորձելու համար տալիս են յերե-  
խաներին գարեջուր, գինի և ողի: Այդ խմիչք-  
ների մեջ յեղած սպիրտը (ալկոհոլը) ամենա-  
վտանգավոր թույնն ե ուղեղի և ներվերի համար  
մանավանդ մինչ դպրոցականի: Սպիրտի տված  
վնասները յերեխայի վաղ տարիներում չի բռն-  
վի հետագայում վոչ մի դեղով, և նրա հետա-  
գա ամբողջ կյանքի վրա կանդրազառնա:

### ՅԵՐԵԽԱՅԻ ԿԵՐԱԿՈՒՐԸ ՊԵՏՖ Ե ՀԱՄԵՆ ԼԻՆԻ

Յուրաքանչյուր մայր սիրում և խղճում ե  
իր յերեխային. պատրաստելով կերակուրը նա

չանք ե գործ դնում, վոր այդ կերակուրն ամ-  
բողջապես յերեխայի ոգտին ծառալի, մայրը  
հաճախ կերակրի համար շատ տեսակ մթերքներ  
ե գործ ածում, բայց դուրս ե գալիս, վոր  
տակավին քիչ են կերակրի բազմազանությունն  
ու բավարար քանակը: Պետք ե վոր պատրաս-  
տած կերակուրը համեղ լինի:

Յերբ մեր առաջ համեղ բան ե դրած կամ  
յերբ մտածում ենք մի վորեե համեղ բանի մա-  
սին, ինչպես ասում են մեր բերանի ջուրը  
գնում ե, իսկ յերբ ուժով ուտում ենք անհամ  
կերակուրը՝ մեզ կուշտ չենք զգում և ուտելու  
ցանկությունը չի բավարարվում:

Ի՞նչից ե այդ:

Այդ նրանից ե, վոր համեղ կերակուր ու-  
տելու դեպքում մարդու բերանի և ստամոքսի  
մեջ շատ նյութեր են դուրս գալիս, հութեր,  
վորոնք նպաստում են կերակրի մարսելուն:

Անհամ կերակրի դեպքում կերակրի գունդը  
դժվարությամբ ե անցնում բկով և յերեխային  
ոգուտ քիչ է տալիս. որինակ՝ մայրը յերեխայի  
համար բանջարներից պլուրեյե պատրաստել,  
բայց ինչպես ե պատահել, աղը շատ ե արել, կամ  
հին լուղ ե ածել կամ ծխի հոտ ե գալիս և  
պյուրեն անհամ ե ստացվում:

Յերեխան լաց կլինի ու հետո կուտի այդ

անհամ պյուրեն, վորից նա մի առանձին ոգուտ չի ստանա. պյուրեն կա, բայց նրա սիրտն այլևս չի ուզում, մի ուրիշ անգամ մայրը լավ է պատրաստել, բայց վոչ մի հորդորանքով չի կարելի համոզել՝ գոնե փորձել կերակուրը. Յերբեմն շատ ժամանակ է անցնում մինչև վորյերեխան սովորում է մի կերակրի, մանավանդ երբ այդ անծանոթ կերակուր է, շատ մայրել կարծում են, չպետք է առանձնապես ուշադրություն դարձնել կերակրի համեղության վրա, յերեխան պահանջկոտ կդառնա, մինչդեռ, ինչպես տեսանք, բավական չե, վոր կերակուրը քանակով շատ և տեսակով զանազան լինի, այլ պետք է նաև համեղ լինի:

### ՊԵՏԸ Ե ԿԵՐԱԿՐԵԼ ՅԵՐԵԽԱՅԻՒՆ ՎՈՐՈՇ ԺԱՄԵՐԻՆ

Գետը ե հենց փոքր տարիքից սովորեցնել յերեխային մի վորոշ կարգի. ուստեղու համար պետք է մի վորոշ ժամանակ հատկացնել և չոպետք ե շեղվել նշանակված ժամից։ Այն մայրյերը, վորոնք վորոշ ժամերին են ծծով կերակրել յերախային, լավ գիտեն, ինչպես յերեխաները շատ շուտ են ընտելանում կանոնավոր ուտելուն, վորից թե՛ նրանց առողջությունն ե

ամբանում և թե մոր ուժերն են պահպանվում։ Այն յերեխան, վորն արդեն-սովոր ե վորոշ ժամին ուտել շատ շուտ սովորում ե նաև վրոշ ժամին գուրս գնալ, վորը շատ անհրաժեշտ ե նրա առողջության համար։

### ՄԱՐՍՈՂՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՐԱՆՆԵՐԸ ԶՊԵՏԸ Ե ԱՆԸՆԴՀԱՍ ԱՇԽԱՏԵՆ

Յերեխայի մարսողության գործարանները, աշխատանքի ընդհատման—հանգստի կարիք ունեն. նրանց կատարած աշխատանքը քիչ չե. ատամներն ուղում են կերակուրը, թքի գեղձերը թուք են տալիս, ստամոքսի մեջ կերակուրը լավ տրորվում է, խառնվում զանազան հյութերի հետ, նույնպես և աղիքների մեջ, վորից հետո ծծվում է արյան մեջ։ Միևնույն ժամանակ մեծ և կարեոր աշխատանք են կատարում մնացած բոլոր գործարանները. նրանց համար անհրաժեշտ ե աշխատանքի ընդհատումն՝ այն պատճառով վոր հետո ավելի թարժ ուժով նորից սկսեն յերեխայի կերակրի վերամշակումը, այն կերակրի վերամշակումը, վորը յերեխայի աճման և նրա եներգիայի սիակ աղբյուրն է։

Իսկը ինչպես մենք տեսնում ենք, կանքում ուտելու համար յերեխան վորոշ ժամ չունի։ Յերեխան ուտում է կամ մեծերի հետ, կամ յերբ ինքն

Ե ցանկանում, իսկ յերեխան տռհասարակ հաւաքախ ե ուզում ուտելը. մալրը մի կտոր հաց կամ մի աչքան ե ճիստում բերանը և ձանը կտրում. յերեխան հացի այդ կտորը ձեռքին՝ վազգվում է խաղում ե, դնում ե ուր հասնի, և ինչ ե ստացվում. ստացվում ե ստամոքսի համար արտաժամյա աշխատանք հանգստի փոխարեն, հացի այդ կտորը դեռ կուլ չտված նորից կանչում են ուտելու և հաճախ զարմանում են, վոր ճաշի ժամանակ յերեխան բան չի ուտում. Ահա այս վազգվոցը հացի կտորը ձեռքին՝ յերեխայի համար շատ վնասակար ե, այդ միջոցին մարսողական գործարանները չեն հանգստանում, ուստի և աշխատում են վատ, դրա համար ել նրանց աշխատանքը անկանոն ե լինում. Մերթ փորակտպություն, մերթ լուծ, Մյուս վնասը՝ յերեխան վաղ տարիքից հենց չի սովորում կյանքի վորոշ դասավորման. Յերրորդ վնասը՝ յերեխայի վազգվումների և խաղի ժամանակ հացի կտորը կեղտոտվում ե, ինչպես և նրա ձեռքերը, և այդ տեսակ ուտելը հաճախ զանազան հիվանդությունների պատճառ ե դառնում:

Յերեխային պետք է կերակրել որական  
անգամ՝ առավոտյան 8-9 ժ. ցերեկվա  
ժամը 12-ին, ժամը 4-ին և 7-ին, Առողջ յերե-  
խայի ախորժակն ուտելյու ժամին միշտ տեղն է

լինում և նա մեծ հաճուքով ուտում ե իր  
բաժինը, յերեխալի նախաճաշը լավ կշտացնող  
նախաճաշ պետք ե լինի, վորովիետե առավոտ-  
յան նրա ուժեղը թարմ են, նա ուժեղ թափով  
ե վազվզելու և խաղալու: Ամենից լավը առավոտը  
տալ նրան տեսակ-տեսակ կաթնով, ձվածեղ,  
թերխաշ ձու, կարագ ու հաց, կաթ, կեսորին՝  
կաթով թել, հաց, կարագ, մեղր, միրգ, ճաշին՝  
մսով կերակուր, բանջարեղին և ալին, իսկ ընթ-  
րիքը պետք ե լինի թեթև մածուն, թթվասերով  
շու, կաթով հասուղա, կաթնով, ձվածեղ. միե-  
նուն կերակուրը մի որգա մեջ 2 անգամ չպետք  
ե տալ յերեխալին: Ճաշից հետո փոքր յերեխա-  
ները պետք ե մի փոքր հանգստանան, քնին.  
մեծերը կարող են չքնիլ, բայց հանգստանալ պետք  
է նրանց համար նույնպես: Յերեխաներին պետք  
ե քնիլուց 1<sup>1</sup> ժամ առաջ ընթրիք տալ:

ՊԵՏՓ Ե ԿԵՐԱԿՈՒՐԸ ՄԱԳՈՒՐ ՊԱՏՐԱՍՏԸ ՅԵՎ  
ԿԱՐԳԻՆ ՄԱՏՈՒՅԵԼ

Բավական չե կերակուրը բավարար չափով,  
բազմազան, համեղ պատրաստել. բավական չե  
վորոշ ժամանակին՝ տալ ուտելու, այլ պետք ե  
նաև մաքուր պատրաստել կերակուրը. Կան աղն-  
տեսուհիներ, վորոնց համար խոհանոցի սեղանը  
այնքան բանի համար ե. Նրա վրա նավթի պրիմուսն

Են թշացնում, նրա վրա հաց են կտրում  
հենց սեղանի վրա և վոչ մի առանձին տախտա-  
լի, սեղանի վրա միս են կտրում, կեղտոտ  
ամաններն են լվանում, հենց այսաեղ ե և սըր-  
բէջը, վորը թէ ամանեղենը, թէ ձեռքեր և թէ  
սեղանը մաքրելու համար ե գործածվում։  
Ամանները ատք ջրով, սոդով կամ սապոնով չեն  
լվանում և դրա համար ել նրանց վրա նախորդ  
որվա ճարպը միշտ մնում ե։ Խնքը մաքրը կերա-  
կուր պատրաստելիս գոզնոց չի կապում, ձեռք-  
երը մաքուր չի լվանում։ Պատրաստած մթերք-  
ները վերցնում ե զանազան անկրոններից, վոր-  
տեղ այդ մթերքները դարսած ելին բաց՝ դառ-  
նալով ճանձերի կերակուր։ Ել ինչու զարմանալ,  
վոր այդ տեսակ մոր յերեխան հաճախ ե տկա-  
րանում ստամոքսի և աղիքների հիվանդություն-  
ներով։ Հաճախ այդ տեսակ մայրը միսը գնում  
ե շուկայում, զանազան պատահական մսավաճառ-  
ներից և վոչ թէ կոռպերատիվում, իսկ շուկայի  
կամ պատահական մսավաճառի միսը շատ հաճախ,  
մանավանդ գյուղում, անասնաբուժը չի տե-  
սել դրա համար ել հաճախ այդ տեսած միսը  
իր մեջ ճիճվի սաղմեր և պարունակում։

## ՀԵՏԵՎԵՑԵՔ ՅԵՐԵԽԱՅԻ ՁԵՐՄԵՐԻ ՄԱԳՐՈՒ- ԹՅԱՆԸ

Յերբ մայրն ուտելու բան ե տալիս, նա  
պետք ե հոգա, վոր յերեխայի ձեռքերը լվացած  
լինեն, սեղանը պետք ե ծածկած լինի սփոռոցով  
կամ շատ մաքուր լվացած մոմլաթով (կիյոնկա)։  
Ճաշի նստարաններից յուրաքանչյուրը պետք ե  
ունենա իր պնակը, պատառաքաղը, գղալը, հացի  
համար առանձին պնակ ե պետք։ պետք ե յե-  
րեխայի մեջ գաղ տարիքից հետեւյալ սովորու-  
թյունը մտցնել՝ լվանալ ձեռքերը արտաքնոցից  
կամ փողոցից տուն գալուց հետո յեվ մանա-  
վանդ ուտելուց առաջ։ Յերեխան շփում ե ու-  
նենում կենդանիների հետ փողոցում, շատ բանի  
յե ձեռք տալիս և շատ հեշտությամբ կարող են  
մաշկի ամեն տեսակ հիվանդություններ ստանալ  
կամ վարակվել ճիճուններով, վորոնք մի անպիսի  
շարիք յեն, վոր արժե յերկար կանգ առնել նրանց  
վրա։

## ՊԵՏՔ Ե ՊԱՅՄԱՐԵԼ ՃԻՇՈՒՆԵՐԻ ԴԵՄ

Յերբեմն բժիշկը հարց ե տալիս մորը. ինչ  
հիվանդություններ ե ունեցել նրա յերեխան։  
մաքրը շատ քիչ գեպքերում ե ասում, վոր ճի-  
ճուններ ե ունեցել, իսկ յերբ բժիշկը հարց ե

տալիս ճիճուների մասին, մայրն, առանց տաստան-  
վելու և պարզորեն, ասում ե—դեհ, ի հարկե, ճի-  
ճուներ ունեցել ե, յերեխաներից ով ճիճու  
չունի։ Յեկ յերեխաների դժբախտությունն ել  
հենց այն ե, վոր մայրերը սովորել են նրանց  
և հատուկ միջոցներ չեն ձեռք առնում։ Յեկ  
իրոք 100 յերեխալից 70—80-ը ճիճուներով  
հիվանդ են և յերեմն մի յերեխան 3—4 տե-  
սակ ճիճու յե ունենում։

Ճիճուները զանազան տեսակի յեն, ամենից  
ավելի պատահում են 3 տեսակի՝ մեկը սպիտակ,  
փոքր ինչ վարդագույն կլոր. այս տեսակի ճի-  
ճուները մեծ քանակությամբ են լինում յերե-  
խայի աղիքների մեջ և ասկարիդներ են կոչվում։  
Յերեխաները նրանցով վարակվում են կենդա-  
նիներից, վորովհետև այդ ճիճուների ճվիկները  
հսկայական քանակով դուրս են գալիս կենդա-  
նիների կղկղանքի հետ։ Այդ ճիճուները դուրս  
են գալիս յերեխալի աղիքներից կամ վերջնա-  
ղիքից կամ բերանից, վոր վտանգավոր ե, վոքը  
յերեխան կարող ե խեղղվել։ Յերեխայի աղիք-  
ների մեջ կլոր ճիճի ձվեր շատ կան և սնվում  
են յերեխայի հութերով, մեծանում են և լցնում  
աղիքներն իրենց թուխով. դրանից ե, վոր յերե-  
խան կորցնում ե ախորժակը և հաճախ սրտա-  
խառնություն ե ունենում։

Յեթե ժամանակին չէ եռացնենք ճիճուներին,  
յերեխան արնապակասություն կստանա։ Այդ  
ճիճուները յերբեմն անցնում են յերեխայի այլ  
գործարանները, իսկ զբանից յերեխան կարող ե  
ծանր հիվանդություն ստանալ։ Կլոր ճիճուների  
յերկրորդ տեսակը մազագլուխն ե, վորը ամուր  
կպչում ե աղիքի պատին իր մազանման գլխով  
և շուլալվում ե աղիքի պատի մեջ, վորից աղիքի  
պատի վրա առաջանում են հեշտությամբ վա-  
րակն ընդունող բազմաթիվ վերքեր։ Կլոր ճիճու-  
ների յերբորդ տեսակը պիտուկն ե. այդ վոքըիկ  
ճիճուն գիշերները դուրս ե սողում վերջնու-  
դուց սաստիկ քոր ածում յերեխայի յետուքը  
անցքի շուրջը յերբեմն սողում ե դեպի առաջ  
և ստում ե փոքր աղիկների սեռական ճեղքի  
մեջ և այդտեղ ել առաջ ե բերում սաստիկ քոր։  
Այդ քորից յերեխան վատ ե քնում նյարդալին  
և դառնում, դյուրագրգիռ, և ձեռք ե բերում մի  
վատ սովորություն—ձեռնահարել սեռական  
գործարանները։

Յուրաքանչյուր մայր պետք ե շատ մեծ  
ուշադրություն դարձնի, յերբ յերեխան ճիճու-  
ներով հիվանդ ե, նա պետք ե անհապաղ բժշկին  
գիմի, հակառակ պարագալին այն ամբողջ աշ-  
խատանքը, վորը նա գործ ե դնում յերեխալի  
սննդի վրա, բոլորովին կկորչի։ Մայրը կարող ե

ուշադիր և հոգատար վերաբերվել յերկայի սննդին, կարող ե յերեխային զանազան տեսակի կերակուր տալ, բավարար չտփով, համեղ պատրաստած, միշտ վորոշ ժամին, ողաճպանելով ամեն անգամ մաքրությունն ու կարգը, բայց իր մի գատարակ սովորության պատճառով (անուշադրություն գեպի ճիճուները) կարող ե ոդը ցնդեցնել իր աշխատանքների ոգտագար հետևանքները:

## ՈՒՏԵԼՈՒ ԺԱՄԱՆԱԿ ՅԵՐԵԽԱՅԻՆ ԽՐԱՏՆԵՐ ԶԿԱՐԴԱԼ

Այդ վատ սովորությունը կայանում է հետևյալում. շատ ծնողներ ոգտվելով նրանով, վոր յերեխան հանդիսատ նստած ե սեղանի մոտ, սկըսում են խրատներ կարդալ, նկատողություններ անել չարության համար կամ սպառնում են նրան շվելու համար։ Յերեխան այդ միջնոցին արցունքներն աշքերին կուլ ե տալիս կերակուրը մինչդեռ այդ տեսակ կուլ տված կերակուրը, նույնպես լավ չի յուրացնում ինչպես և անհամ պատրաստածը։ Ճաշի ժամանակ միայն հանդարտ և դուրեկան խոսակցություն պետք է ունենալ։ Նույնպես լավ չե ճաշի ժամանակ գիրք կարդալը, զա գրավում ե յերեխայի ուշա

դրությունը և խանգարում է յերեխային ծամել կերակուրը, ինչպես հարկն ե։

Այն ժամը, վոր հոգատարությունն ե ցուցաբերում գեպի՝ յերեխայի սնունդը, փոխարենը առողջ և զգարթ դեմքով յերեխա կունենա։ Համեմատելով այն յերեխաններին, վորոնք մանկատուն են ընդունված ընտանիքներից և այն՝ մսուրից, վորտեղ սնունդը կանոնավոր ե տարվում, տեսնում ենք, վոր մսուրի յերեխանները հասակով բարձր են, խոշոր են և քիչ են հիվանդանում արյան պակասությամբ։ Մանկապարտեղ հաճախող յերեխանների մայրերը միշտ ել ցուցմունքներ են ստանում մանկապարտեզի դեկավարուհիներից ինչպես սնունդ տալ յերեխաններին, և յերեխաններին նայելով միշտ ել կարելի յե իմանալ՝ թե վորի մայրը չի հետեւում ստացած խորհուրդներին։

Ի վերջո պատմենք թե՛ ինչպես պետք ե կերակրել յերեխային, վոր կերակուրը բազմազան լինի և մի շաբաթվա մեջ կրկնողություն չլինի։

## ՈՐԻՆԱԿԵԼԻ ՍՆՈՒՆԴ 10 ՈՐՎԱ ՀԱՄԱՐ ՅԵՐԿՈՒԻՇԱԲԹԻ

1. Սուրճ գարուց կամ թե՛ կաթով, հաց ու կարագ.
2. Մաից թարմ սուպ կաղամբով և արմախըով. բընձով քաշովի, խնձոր.
3. Կաթ և սպիտակ հաց.
4. Մակարոն կամ թարմ ոշտա (խաշած) կարագով։

## 2. ՅԵՐԵՔՇԱԲԹԻ

- Թել կաթով, հաց ու պանիր, կարագ:
- Սուզ գետնախնձորով (կարտոֆիլով), ծեծած միս (կատետ), աճառով քաշը, հում դաղար:
- Կաթ, կանֆետ և խմորեղեն:
- Վինեգրետ խաշած գետնախնձորից, գաղարից, բաղուկից, թթու դրած կաղամբից և վարունկից:

### 3. ԶՈՐԵՔՇԱԲԹԻ

- Թել կաթով, ձու, հաց և կարագ.
- Բանջարեղենով սուզ, ծեծած միս մակարոնով:
- Կաթ, հաց, կարագ և մեղր:
- Մաննի կաթնով կամ մածուն:

### 4. ՀԻՆԳՇԱԲԹԻ

- Թեյ կաթով, հաց, կարագ:
- Սպաս, հավի մսից կատետ կամ ձուկ, պտղից հասուգա (կիսել):
- Կաթ, հաց ու կարագ:
- Խաշած գետնախնձոր թթվասերով:

### 5. ՈՒՐԲԱԹ

- Թել, հաց ու պանիր:
- Չիրթմա հավից, բընձով (գետնախնձորով) կատետ:
- Կաթով թեյ, հաց ու կարագ:
- Մածուն և հաց:

## 6. ՇԱԲԱԹ

- Սուրճ (գարուց) կաթով, ձվածեղ, հաց.
- Լոբախաշու, տապակած ձուկ (իշխան, առանց փշերի):
- Կաթ ու հաց:
- Կաթնով (բընձով).

### 7. ԿԻՐԱԿԻ

- Թել կաթով, հաց ու պանիր, կարագ.
- Քուֆթա-բողբաշ, մակարոն լուղով, տակ (կարմիր):
- Կաթով թեյ, հաց ու կարագ.
- Բընձով քաշովի.

### 8. ՅԵՐԿՈՒՇԱԲԹԻ

- Թեյ կաթով, հաց ու պանիր
- Սպաս, տապակած կոլուակ և գետնախնձոր:
- Թեյ կաթով, հաց ու կարագ.
- Կաթից հասուղա (կիսել).

### 9. ՅԵՐԵՔՇԱԲԹԻ

- Սուրճ կաթով, հաց ու կարագ մեղրով.
- Մսից ապուր բընձով, սպանաղ տապակած, լեփած չիր (կոմպոտ).
- Կաթ և խմորեղեն.
- Մածուն.

### 10. ԶՈՐԵՔՇԱԲԹԻ

- Կակաո, թեյ կաթով, հաց ու կարագ.
- Մսից ապուր ձավարով, աճառով քաշովի, միրգ.

Յ. Կաթ, Կարկանդակ բրնձով և ձվով.

4. Թարմ ոշտա (խաշած) ձվով.

Ի հարկե, սույն սննդացուցակը պայմանական է և կարող է փոփոխության յինթարկվել ըստ տարվա յեղանակների (սեզոնների), շուկայի և այլն։ Համեստայն գեղս, պետք է ուշ դարձնել սննդի բազմազանության, և վորեե կերակուր ցուցակից հանելու դեպքում՝ փոխարինել այն համարժեք սննդանյութով։


Այսպես, որինակ, կանաչեղենի վրա կարելի  
է ավելացնել տապակած լոբի, շպինատ, յեփած  
վուալ, լոբի, սիսեռ, կըուալա (պեռլովի, մաննի)  
պամիդոր, բագրիջան, սոխ:

Կերակուրներից ինկատի ունենալ նաև  
կարտոֆիլի կատեսն ու պլուբեն, բընձի շիլան,  
մրգերից ու հյութից յեփած կոճպոտը (խոշաբ)  
ու հասողան (կիսել) և այնքը (պաղիվկա):

Սուրբը լինելու էւ միայն գարուց պատրաստած, թարմ մրգեր պետք եւ տալ լստ հնարավորության հաճախ - խնձոր, տանձ, գեղձ, մոռ (մալինա), մանավանդ խաղող:

Ակ հացն անհրաժեշտ է 5—8 տարեկան-ների համար, լեթե սիալն լավ և թխված: Թեր-խաշ թարմ ձուն նույնպես ոգտակար է:

Զկներից տալ՝ իշխանը և բերովի ձկների  
մեծ տեսակները (սուզակ, լասապինա, սազան)  
վորոնք մանր փշեր չեն են.



«Ազգային գրադարան»



NL0272003

22 73

ԳԻՒՆ Ե 15 ԿՈՂ.

809

1

2

